

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ		
Տեսակը	IFAD – ի Գյուղատնտեսության զարգացման վարկեր	
Վարկի նպատակ	Գյուղատնտեսության ոլորտում գործունեություն, հիմնական և շրջանառու միջոցների համալրում, կապիտալ ներդրումներ*	
Վարկի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար	
Վարկառու	18-65 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ, ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր	
Վարկի ժամկետ	24-84 ամիս	
	Եթե ենթավարկի ծախսային հոդվածներում շրջանառու միջոցներին ուղղված վերաֆինանսավորումը գերազանցում է 20%, ապա ենթավարկի առավելագույն ժամկետը սահմանվում է 24 ամիս:	
Վարկի մայր գումարի վճարման արտոնյալ ժամկետ	0-18 ամիս	
Վարկի գումար	1 000 000 – 70 000 000 ՀՀ դրամ**	13 000 – 150 000 ԱՄՆ դոլար**
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք (հաստատուն)	11.5%	9.75%
Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք	12.13-13.50%	10.23-11.47%
Վարկի տրամադրման և սպասարկման վճար	Չի սահմանվում	
Ժամկետանց մայր գումարի տույժ	0.1% օրական	
Ժամկետանց տոկոսի տույժ	0.13% օրական	
Վարկի վաղաժամկետ մարման տույժ	Չի սահմանվում	

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:

Ապահովման միջոց/Գրավի առարկա	1 000 000-3 000 000 ՀՀ դրամ	3 000 001-5 000 000 ՀՀ դրամ	- Անշարժ գույք (շինություն) և/կամ տրանսպորտային միջոց*** (Հիփոթեքի պայմանագիրը վավերացվում է նոտարական կարգով), - Վարկային կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ:
	- Առնվազն 1 ֆիզիկական անձ (18-65 տարեկան), ով չունի գործող ժամկետանց պարտավորություններ: - Երաշխավորը պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ գրանցված աշխատող: - Երաշխավորի վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:	- Առնվազն 2 ֆիզիկական անձանց (18-65 տարեկան) կամ ԱՐՁ-ների երաշխավորություններ, որոնք չունեն գործող ժամկետանց պարտավորություններ: - Երաշխավորներից առնվազն մեկը պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ գրանցված աշխատող: - Երաշխավորներից յուրաքանչյուրի վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը: - Վարկային կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ:	

*** Տրանսպորտային միջոց, որի արտադրման տարեթիվը գրավադրման պահին չպետք է լինի ավելի հին, քան՝

- ռուսական արտադրության ավտոմեքենաների համար՝ 5 տարի,
- այլ երկրների արտադրության ավտոմեքենաների համար՝ 10 տարի:

Ավտոտրանսպորտային միջոցը ենթակա է պարտադիր «Կասկո» (ֆիզիկական վնաս և առևանգում) ապահովագրության հոգուտ Բանկի՝ առնվազն Վարկի գումարի չափով և Վարկի գործողության ամբողջ ընթացքում:

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:

Վարկ/Գրավ առավելագույն արժեք	Համաձայն Հավելված 1-ի:
Գրավի գնահատում	- Գրավը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության և/կամ Բանկի աշխատակցի կողմից՝ կախված վարկի գումարի չափից: - Բանկի աշխատակցի կողմից գնահատումն իրականացվում է անվճար:
Մարման եղանակ	- Անուիտետային (մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում), - Դիֆերենցված (մայր գումարի ամենամսյա հավասարաչափ և տոկոսագումարի ամենամսյա վճարում), - Անհատական վճարումների ժամանակացույց: - Մարման եղանակը՝ ըստ հաճախորդի ընտրության:

1. Ֆինանսավորման համար ընդունելի ներդրումները ներառում են.

- 1.1. Գյուղատնտեսական կենդանիների գնում և բուծում
- 1.2. Գյուղատնտեսական բույսերի տնկանյութի կամ սերմերի գնում,
- 1.3. Գյուղատնտեսական նշանակության հողերի գնում,
- 1.4. Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների և պահեստարանների գործառնական նշանակությամբ հողերի գնում,
- 1.5. Գյուղատնտեսական այգիների գնում,
- 1.6. Կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող արտադրանքի արտադրություն(գյուղատնտեսական արտադրանք),
- 1.7. Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակում կամ վերամշակող հզորությունների կառուցում, վերանորոգում,
- 1.8. Գյուղատնտեսական արտադրանքի և/կամ գյուղմթերքների մարքեթինգ և լոգիստիկա, շուկայահանման ենթակառուցվածքների կառուցում/ստեղծում,
- 1.9. Գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական արտադրանքի և գյուղմթերքների վաճառահանման, տեղափոխման կամ արտահանման նպատակով բեռնատարների, կիսակցորդների և կցորդների գնում,
- 1.10. Գյուղտեխնիկայի և գյուղգործիքների գնում, դրանց վարձակալության տրամադրում,
- 1.11. Մեքենատրակտորային պարկերի ստեղծում և դրանց շահագործում,
- 1.12. Ոռոգման կաթիլային համակարգերի, ոռոգման այլ համակարգերի կամ դրանց բաղկացուցիչ մասերի ու պարագաների կառուցում, գնում կամ վերանորոգում,
- 1.13. Կարկտարհարումներից, սառնամանիքներից, ցրտահարությունից և թռչուններից պաշտպանման միջոցների գնում,
- 1.14. Գյուղատնտեսական արտադրանքի և/կամ գյուղմթերքների սառնարանային և այլ պահեստների, այլ սառնարանային տնտեսությունների կառուցում, վերանորոգում կամ դրանց շահագործմամբ ծառայությունների մատուցում,
- 1.15. Գյուղատնտեսական արտադրանքի և գյուղմթերքների առևտուր և առևտրի կազմակերպման վայրերի կառուցում և շահագործում,

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:

1.16. Պարարտանյութերի, թունանյութերի, բուժանյութերի և այլ ագրոքիմիական պայքարի միջոցների և նյութերի գնում՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ արգելված նյութերի և միջոցների,

1.17. Կերերի, կերային հավելումների և այլ նյութերի գնում,

1.18. Այլ գյուղատնտեսական գործունեության ֆինանսավորում,

1.19. Թիրախային տարածաշրջաններում ոչ գյուղական գործունեություն:

2. Ենթածրագրերի շրջանակներում անընդունելի ներդրումները ներառում, բայց չեն սահմանափակվում ստորև թվարկված նպատակներով և ոլորտներով.

2.1. Բնակարանի կառուցում կամ վերանորոգում,

2.2. Այլ ֆինանսական կառույցում առկա պարտքի վերաֆինանսավորում,

2.3. Ծխախոտի և ծխախոտային արտադրանքի արտադրություն, վերամշակում և առևտուր,

2.4. Մեծածախ առևտրային գործունեություն, բացառությամբ գյուղատնտեսական արտադրանքի և գյուղմթերքների,

2.5. Սպառողական վարկերի տրամադրում,

2.6. Մետաղների առևտուր,

2.7. Նավթամթերքների առևտուր,

2.8. Թունաքիմիկատների առք և վաճառք, եթե դրանք ՀՀ շրջակա միջավայրի պահպանման տեսանկյունից ընդունելի չեն:

3. Ծանոթություն

**** Միևնույն վարկառուին (ներառյալ՝ փոխկապակցված անձանց) տրամադրվող վարկերի մնացորդների հանրագումարը չի կարող գերազանցել 70 մլն ՀՀ դրամը կամ 150 000 ԱՄՆ դոլարը:**

3.1. Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայություններ և վճարներ-

1) Անշարժ գույքի՝ այդ թվում հողամասի, գրավադրման դեպքում.

ա. Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10 000 ՀՀ դրամ,

բ. Գրավի պետական գրանցման վճար՝ 26 000 ՀՀ դրամ,

գ. Նոտարական վավերացման վճար՝ 16,000-20,000 ՀՀ դրամ:

դ. Գույքի գնահատման վճար՝ 15 000-25 000 ՀՀ դրամ:

2) Ավտոմեքենայի գրավադրման դեպքում.

ա. Ավտոտրանսպորտային միջոցի սահմանափակումների մասին տեղեկանք՝ 3 000-4 000 ՀՀ դրամ,

բ. Գրավի պետական գրանցման վճար՝ 2 000-3 000 ՀՀ դրամ,

գ. Գրավի ապահովագրություն՝ վարկի գումարի 2.5%-ի չափով,

դ. Նոտարական վավերացման վճար՝ 11 000-12 000 ՀՀ դրամ,

ե. Գույքի գնահատման վճար՝ սկսած 5 000-20 000 ՀՀ դրամ:

**Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:**

4. Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել,
5. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ընդունելով տարին 365 օր:
6. Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով:
7. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների և անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին Հավելվածներով:
8. Վարկը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում, «Հին Նորք», «Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Մովսես Խորենացի», «Սեբաստիա», «Կոմիտաս», «Բաղրամյան», «Թումանյան», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Շենգավիթ», «Ալեք Մանուկյան», «Տիգրան Մեծ», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Սևան», «Գավառ», «Անի», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան», «Չարենցավան», «Ալավերդի» «Քաջարան», «Նոր Նորք» մասնաճյուղերում:
9. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.
- 9.1. Վարկառուի, Գրավի և Երաշխավորի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,
- 9.2. Վարկառուն վարկի տրամադրման պահին չպետք է ունենա ժամկետանց վարկային պարտավորություններ,
- 9.3. Վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը,
10. Վարկի մերժման գործոններն են Վարկառուի և/կամ Գրավի և/կամ Երաշխավորի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:
11. Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացումը և Վարկառուին տեղեկացումը կատարվում է պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:
12. Վարկի տրամադրում՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:
13. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկի Վարկային պայմանագրով սահմանված վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկը իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:
14. Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ <https://www.fastbank.am/այլ-ֆինանսական-ծառայություններ>, ինչպես նաև տեղադրված են Բանկի մասնաճյուղերում:
15. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ՝ ՎԱՐԿԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԸ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ), ԻՍԿ ՏՈՒՅԺԵՐԸ/ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ/ԿԱՄ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՅՎԱԾ ՀԱՇՎԱՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐՔԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ, ԳՐԱՎԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԻՄԱՑ 3-ՐԴ ԱՆՁԱՆՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ:
16. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՆԱԳԱՆՁՎԵԼ:

Հաստատված է
Տնօրինության 19.02.2026-ի նիստի
Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:
Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:

17. ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՅՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:

18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՂ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

19. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ԶԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ (www.fastbank.am):

20. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎՐԱ:

21. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԳՅՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՈՐՈՆՑ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋՈՒՄ՝ <https://www.fastbank.am>: ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԵՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ, ՈՐԸ ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ՄԵԿ ԱՄԻՍԸ, ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՍՊԱՌՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ:

22. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵՂ ՏՐԱՄԱԴՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՂՈՐԴԱԳՅՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԿԱՊԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ:

23. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՂ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

24. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:

25. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՄԻՆՉ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՁԵՂ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՂ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

26. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:

27. ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՅՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ: